# 9. ՍԱՐԽՈՇ ՎԱ̈ՐՏԱ̈Ն

Կէլնի մեկ մեր, մեկ տղա: Իտընքյան իրենց երկիր չեն կանա ապրե: Կասեն. «Էլնենքյ էրթանքյ Ըստա̈մբեոլա քյաղաքյ աշխատենքյ, ապրենքյ»:

Կէլնեն կէրթան Ըստամբեոլա քյաղաքյ, գյամուց կէլնեն տյուս թե չէ՝ էտա տեղայ լոթիքյ կիմնան, թե իսոնց քանի մը տարա̈ կա, կուզեն իտոր խապեն, մեյտեղ ուտեն:

Ուրենց ինգյըրներայ մեկուն կսովրըցուցեն, կասեն. «Կընա̈ խետ էտա տղին ծանոթացի»:

Էտա մարթ կէրթա̈ մոտ Վա̈րտա̈ն, կասի. - Օ՜, պա̈րի ես եկե. տո՞ ըստեղրանքյ: Դե՛, քյելի, դե քյելի էրթանքյ կա̈հվեն, քյե կա̈հվե մը իքյրամ անեմ:

Կառնի Վա̈րտա̈նին, կէրթա̈ն կա̈հվեն: Կա̈հվե մ'իքյրամ կանի, կա̈հվից սորա կասի. - Վա̈րտա̈ն, նեղացուկ ես, արաղ մ'էլ չե՞ս խմե:

Կա̈հվաջուն կասի. - Իսուն տրամ արաղ պի:

Արաղ կլըցի կպիրի թե չէ՝ ինգյըրներ կուգյան: Իսուն տրամ ինորից, իսուն տրամ ինորից, չում հըմեն էլ կշարխոշանան, կէլնեն խետ Վա̈րտա̈նին մեյտեղ կէրթա̈ն, Վա̈րտա̈նի տեղ կիմնան, թողնեն կէրթա̈ն մե-մեկ ուրենց տուն:

Առատուն շոտ կուգյան էլըմ Վա̈րտա̈նին կկանչեն, կառնեն կէրթա̈ն: Էլըմ կնստեն մեյխանեն, կխմեն: Աման էսա տրիս Վա̈րտա̈ն իքյրամ կանի:

Մեյխանջուն կսովրցուցեն, կասեն. մեկ կուտաս, էրկու կգյրիս: Մեկ ամիս, էրկու ամիս, չում Վա̈րտա̈նի հըմեն տա̈րեն կուտեն:

Մեր կտիսնա, որ Վա̈րտա̈ն չում իրիկուն շարխոշութնի իտև ինգյե, ուր տա̈րեն հըմեն կերե: Կէլնի մեյ կիշեր ինոր ջեռքից էրկու մաճիտիե կխանի: Կասի. «Էս էլ թո մնա զի պատըղքի գյին»:

Վարդան հըմեն փարեն ուտելուց վերճ, մեկ օր կմնա անութի: Կէրթա ուր ինգյըրներուց կասի. - Ի սեր աստուծու, զի խինգյ կուտուշ փարա տըվեքյ՝ տանեմ տամ խացի: Վուրուն որ կերթա, կվոնտեն: Կասեն. - Քյոփօղլի, խորտ վաստակ խետ մե՞ ես կիրե, որ իկեր ես մեզնից փարա կուզես:

Վարդանի ճար կկտրի, կերթա կապուկի մոր, խենքյ մոր մոտ փարա կա՞, թե չէ: Զոռով-յուլով մոր կկոխի գյետին, տիսնա որ ջեռք երկու խա մեճիտիե կա: Կուզի որ առնի, մեր կուլա կասի. - Ի սեր աստուծո, էտա իմ պատընքյի գյին ի, մի՛ տանե:

Կասի. - Մարե՛, ես մեր երկիր բարըրըի աշկերտ ի, տու տանեմ թախըմ առնեմ, փարա վաստըկեմ, պիրեմ քյո փարեն տամ:

Կառնի փարեն, կերթա չարշին, մեյ խատ ուսթուրա, մեյ խատ խայլիկ, մեյ խոսքով ինչ որ պետքն էր, կառնի կուգյա շուկեն, կինի դես դեն՝ թրաշ անել: Օրական խինգյ-տաս կուտուշ կինի ծեռ, իրիկուն կտանի մեյխանեն, կուշտ կխմի, էրկու խատ էլ խաց կառնի, կըրվելեն, կըրկըտվելեն կուգյա տուն:

Մեկ ամիս, էրկու ամիս ըսկընա կշարունակի: Մեկ օր քյոռ, շարխոշ տուն էրթացած ժամանակին, տյուս կթափի վերեն: Կնտի վազիրի տան պատի ․տակ, որ տյուս էլնի, տերամեռի խոնջան կուրիսե, կընայե կուլ: Քյոռ շարխոշ կէլնի դոն քյաշելու, տիսնա որ խոնջան չըկա, կբաշլայի բոռալ, ճըվալ:

Վազիրի աղջիկ կէլնի փենջարից կիրիշկի, կտիսնա որ մեյ խատ խորոտ տղե մ'էտա շարխոշ հալի մեչ կինի, կկայնի:

Ինքյ ուր մտքի մեչ կասի. «Ափսոս չի՞ ըսկընա տղեյներ անտեր, անտիրական, կերթան շարխոշութենի իտև, զի մեկ իրիկըմ լազըմ ի, ես իսորան պիտի առնեմ, բալքի թե իսորան սարխոշութենից ազատեմ»: Հրաման կանի ընչնողներուց մեկուն, որ իտոր շըլվար, թոմբան քյաշեն վեր, կապեն:

Տղեն կբռռա, կասի. - Աղա՜, անունտ ի՞նչ ի, իմ անուն շարխոշ Վարդան ի:

- Վարդա՜ն, Վարդա՜ն, կընա մորտ ասա՛, որ վառ գյա զիկ ուզի քյե խամար:

Վարդան ի, շարխոշ հալի մեչ կբաշլայի մեչ բոռալ, ճըվալ, վազիրին իշունցյ տալ. որ չի տաք՝ կփախսցուցեմ, աստայ կանեմ, քոստայ կանեմ, ծե կսպանեմ:

Ընչնող տղոցյ կթափըլցուցի վեր վազիրի տըռան: Ընչնող տղոցողներուց մեկ կտիսնա, որ շարխոշ ի, թիվեն կպռնի կառնի կերթա: Կտանի չում Վարդանենց փողոն, կասի. - Դե՛ տղա, կընա քյո տուն: Վարդան կըրվելեն, կըրկըտվելեն տուն կերթա, շուն կզանի, գյըրկից խայեր կտանի:

Խեփ կէրթա տուն, մոր կասի. - Որ առատուն չկընայիր վազիրի աղչիկ ուզեյիր զի խամար, քյե կսպանեմ:
Մեր էլ կվերչի կասի. - Քյո գյըլեոխ խորեմ, էտա խայ պիրելու բաղա՞ն էր:
Վարտան կէլնի կպոնի մոր կթըփի: Մեր ճարտ-փըշուր կինի էնտեղ, կքյնի:
Առատուն որ կակլխին, իրիկվան արածներ Վարտան ուր միտք կպիրի, կէլնի մոր սաեին-սաեին կհամոզի, որ էրթա վազիրի աղչկան ուր խամար կնիկ ուզի:
Թե զոռով, թե յոլով, մոր կառնի ուր խեփ, կտանի վազիրի տուն նշանց կուտա, կթոնի կէրթա ուր պանին:
Մեր տուռ կտըփի, տուռ կպանան, կտիսնան պառավըմ:
Կասեն. - Պառավ, ընչի՞ խամար ես եկե:
Կասի. - Իկեր եմ՝ կուզեմ ճեռչ խանըմին տիսնալ:
Կէրթան խանըմին կասեն. - Պառավմ՛ եկե, կուզի քյե տիսնալ, ի՞նչ կասես:
Կասի. - Կընայեքյ պերեքյ վեր, խենքյ ի՞նչ կասի:
Պառավն ի, որ կէլնի վեր, պարև կուտա: Աթոռըմ կտնեն տակ, որ նստի ուր ասածն ասի:
Պառավ կնստի, խանըմին կասի. - Քյո աղչիյն պիտի տաս իմ լաճուն:
Խանըմ որ էսա խաբար կլսի. - Յաման, - կասի, - էսա ծուռ պառավ ընչի՞ պիրիքյ վեր, յալլա՛, առեքյ տարեքյ: Իսոր գյըլեոխ խելքյ չըկա:
Կխանի [քանի]մ ոսկի փարա կուտա, խալայեղներայն էլ կասի քիչըմ խին խալավ տվեքյ, թող առնի տանի:
Խանըմի ոսկիքյ, շալվըներ կառնի, ուրախ-ուրախ կէրթա տուն:
Իրիկուն Վարտան շարխոշ, անակախ կուգյա տուն:
Կտիսնա մեր տուն ի: Կխառցուցի, թե. - Մարե՛, կընացի՞ր վազիրի աղչիյն ուզիր:
Մերն կասի. - Խա՛, բալամ, կընացի ուզեցի, ամա՞ն չտվին:
Վարտան որ էտա կլսի, կբոռա, կճվա, մոր իշունց-քյուֆյուր կխառնի իրար: Մեյ թարաֆեն էլ մոր սիրտ կուտա, կասի. - Մարե՛, տյու մառախ մ'անե, ես կէրթամ փախսուցեմ:
Մեկել օր Վարտան էլըմ շարխոշ, կուգյա վազիրի տըռնեն կընցնի: Աղչիկ փենջարեն կէլնի, Վարտանին կբոռա, կասի. - Վարտան, Վարտան, թե ես քյե ասեցի. կընա մորտ ասա՛, որ գյա զի ուզի քյե խամար: Ընչի՞ չէկավ:
Վարտան էլ կասի. - Իմ մերն եկեր ի էրեկ, տյուքյ չեքյ տըվե:
Կասի. - Վա՜ղ առավտուն մորտ կէօրեոխկես գյա մեր տուն, զիկ

ուզի քյէ խամար: Էն գյախ ես մորս կուշտ նստած կէլնեմ, ինոր պատասխան կուտամ:

Վարտան կուգյա տուն, մոր կհամոզի, որ էմկել օրն էլ էրթա, աղջիյն ուզի ուր խամար:

Մերն էլ կարծելով, թե էլ փարա պիտի առնի վազիրի տնից, առավոտուն կէլնի ուրախ-ուրախ կէրթա վազիրի տուն:

Տոռ կտըփի: Տուռ կպանան, կտիսնան էսա պառավ:

Կասեն. - Պառա՛վ, էլմ ինչի՞ ես եկե:

Կասի. - Իկեր եմ խանըմի խետ պան ունեմ: Կէլնեն խանըմին կասեն, թե. - Էրեկվան պառավ իկեր ի, քյէ կուզի տիսնալ:

Խանըմ կասի. - Կընայեքյ թըփեքյ խանեքյ տյուս, թող էրթա:

Աղջիկ որ մոր կուշտ նստուկ կէլնի, կասի, թե. - Տյու ի՞նչ անքութ կնիկ ես, որ մո քյէ գյայողին թըփելով կճամխես, թո գյա վեր՝ խենքյ ի՞նչ կասի:

Մեր աղջկան խաթըր չուզի կոտրել, կասի. - Ասեքյ գյա վեր, խենքյ ի՞նչ պիտի ասի:

Պառավ կէլնի վեր, պարեով կուտա, կասի. - Խանըմ, իկեր եմ քյո աղջիյ կուզեմ իմ լաճուն, ի՞նչ կասես:

Խանըմ կասի. - Կուրսի՛, խարամ պառավ խելքյ թալե, իկե կրպե մեր տուռ:

Աղջիյն էն ղեխեն. - Դե՛ մարե՛, իրավունք չունես ինոր պան ասելու: Ես եմ ասե որ գյա: Ես էն տըղեն կառնեմ, որ կառնեմ:

Խանըմ աղջկան խաբար որ կլսի, տառնըս պառավուն կասի. - Պառավ, էսօր կընա, վաղն արի, քյէ խոսք կուտամ:

Իրիկուն, վազիրն կուգյա տուն, կէլնի իրկան կպատմի, թե մեր աղջիկ սիրահարվէ պառավու մը տըղի վերեն, կասի՝ կառնեմ որ կառնեմ:

Խեր կկանչի աղջկան, շա կհամոզի, բայց աղջիկ չի համոզվի: Խոր-մոր ճար կկտրի, կպիրեն աղջկան սև խալվըներ կխագյուցեն, կաչկեն որ առավոտուն պառավ գյա տանի:

Պառավ առավոտուն կէլնի, կէրթա վազիրի տուն, պատասխան առնելու, տիսնա որ աղջիյն կուտան, կառնի կուգյա:

Իրիկուն Վարտան էլըմ շարխոշ, անակախ կուգյա: Կուգյա կտիսնա, որ պառավ կընայե վազիրի աղջիյն պիրեր ի: Կուրախնա, քիչըմ կթըռվըռա, կթլֆի կքյնի:

Էն մեկել օր, իրիկուն, ըսպըրիս իրեքյ խայց կպիրի տուն:

Քյանիմ օրից վերչ խարս կասի կիսրոջ, թե ի՞նչ ունեքյ, ի՞նչ չունեքյ:

Պառավ կասի. - Քյէ մեռնեմ, որդի՛, զա՛ չունենք, մենակ քյո մոր տըված էրկու մաջիտրիե փարեն ի, ինան խին խալվըներ:

- Խաթյուն, էն էրկու մաժպիեն պու:

Պառավ կասի. - Խարսնիկ, էն պախեր եմ զի պապնքյի գյին, աման որ պյու կուզես կուպամ:

Խարս կառնի փարեն, խեպ խին խալվըներայ կուպա Վարպանին, ասպծու սեր կուպա Վարպանին:

Կասի. - Էսա փարեն չպանես խըմես, առ պար էսա փարեն պեսակ-պեսակ արփշում առ, քիչմ' էլ կարմիր չուխա առ, պե պու զիկ:

Վարպան կնգյան խոսք չկոպրե, կպանի ի՛նչ ուզեր ի, առանց մեյ փա̈րա̈ ավըլյույելու, կառնի, կպիրի պուն:

Աղչիկ կնսպի մեյ խապ էպա արփշմից, էպա չուխից թավլու մը կզյոռծի: Կուպա Վարպանին, կասի. - Տա՛ր, պիթ-բազար ծախի: Առճին մուշթարին քյանի կուպա՝ պաս: Աման ասպվա՛ծ սիրես, փարեն զա̈յ չանես: Ինչ որ կուպան, կպիրես զի:

Վարպան կպանի պիթ-բազար, պանցը՞ր կպռնի, կբռռա. թավլի՞, թավլի՞, թավլի՞:

Վազիրի մեկ կկանչի Վարպանին, կասի. - Պե՛ փիսնամ:

Վարպան կպանի:

Վա̈զիր կասի. - Ի՞նչ պամ իսոր:

Կասի. - Տյո կիպես, ի՞նչ կուպաս՝ պու:

Կասի. - Քյե իսուն ոսկի:

Կասի. - Տուր փարեն:

Փա̈րեն ծեռնեն կառնի, ուրախ-ուրախ կուգյա պու՞ն: Կպիրի փա̈րեն կուպա ուր կնգյան:

Աղչիյ Վա̈րպանին կօրոխկի, կասի. - Կէրթաս Ծաղկի փողոց, թիվ 6, խըսան կկանչես, գյա ըսպեղ:

Վա̈րպա̈ն կէրթա էպա խըսան կկանչի, կուգյա:

Խուս որ կուգյա պուն, էպա աղչկան կփիսնա, կզարմանա:

Կասի. - Ա՞յ խանըմ, պյու՞ էսպեղ:

- Սուս, մարթու չասես, մարթու չզըյույես, որ իմյա̈՝ քյո վիզ կպրել կուպամ: Մենակ թե կէրթա̈ս, իմ խին քյըրգա̈խի թախըմներայ պես քյըրգա̈խըմ կշինես, կպիրես, շուպ կուպաս զի:

Խուսն ի, շոպըմ կէրթա̈, կշինի, կառնի կուգյա: Աղչիկ կառնի ուր թախըմ: Խսան փա̈րեն կուպա, կէօրոխկի կէրթա:

Աղչիյն կխանի քսան ոսկի կուպա Վա̈րպա̈նին, կասի. - Տար էօխկեմ պեսակ-պեսակ արփշում ինա̈ն գա̈զկես էլ կարմիր չուխից ա՛ռ, պե զի:

Վա̈րպա̈ն կէրթա̈ չուխեն, արփըշում կառնի կուգյա: Օր մութն էր, էլ չըկանա էրթա խմի, էն օր խըմելույ կինի եպ:

Իրիկուն, որ Վա̈րպա̈ն լուրճ նսպեր էր, աղչիյն Վա̈րպանին կասի

թե. - Ի՞նչ կխասկընաս ըմեն օր կէրթաս կխմես. խելքյիս, մտքիս, փարիս կէլնես: Տե՛ս, էսօր ի՞նչ անուշ ի. նստեր ենքյ մեյտըրա, կզրուցենքյ, խաբար կուտանքյ: Արե՛ իմ խաբարն ականջ արա, ես քյե խամար մեյ խատ կահվեմ պռնեմ, կընա նստի էնտեղ, թրաշ արա: Քյո գյործին մույաթ կայ, էլ մ'էրթա խմել:

Վարտան կնգյան խաթըր չկոտրե: Կնիկ կէլնի մեյ խատ կահվեմ կսլռնի, աշկերտմ էլ կպիրի Վարտանին, կտնի էնտեղ: Վարտան թրաշ կանի: Գյայտղ էրթայտղի խետ այլանմիշ կէլնի, էլ չխմե:

Կնիկ կնստի մեյ խա բայրաղըմ կգյեռրծի, որ թամաշի պան ի: Կուտա Վարտանին, կասի. - Տար պիթ-բազար ծախի:

Վարտան ուրպաթ օր կտանի մեյդան ծախելու: Վազիր-վյուքյելեքյ ժողվուտվեր են էնտեղ: Վարտանի ծեռայ բայրաղ որ կտիսնան, շատ կխավնեն, կասեն. - Էսա մե լայեղ չի, տար թակավրուն, թո զանի վեր ուր խազինի էօտեն:

Վարտան կառնի, կտանի թակավրուն: Թակավոր շա կխավնի, խազար խինգյ ոսկի գյին կտնի, կասի. - Վեյ խատ էլ կուզեմ էսա բայրըղիս:

Բայրըղի գին կուտա, վեյ ամիս էլ ժամանակ կուտա, որ վեյն էլ պիրի:

Աղչիկ փարեն կառնի, է՛լ չուխա, էլ արփշում կպիրի, կնստի գյեռրծի: Լըմըննալեն վերճ, ծալի կտնի բեռխչին, կուտա Վարտանին, որ առնի տանի:

Վարտան ի, կառնի կէրթա, ճամբախ ուր խին ինգյըրերներ Վարտանին յախալամիշ կանեն. - Օ՜, պարեով, Վարտան աղա՛, էսա դեռ՞ր ես, ընչի ըննա քյիբարայեր ես, քյելի՛, քյելի՛, էրթանքյ կահվեն, կահվեմ խմենքյ:

Զոռով-յոլով կառնեն կէրթան կահվեն: Փոխանակ կահվա խըմըցուցելու, խուն տրամ արաղ կպիրեն, Վարտան չէր ուզի խմել, ամա՜ն խաթըրի խամար թասմ' են, թասմ' են կուտա, չում կսարխոշայուցեն:

Էն գյախ որ Վարտան կսաբխոշնա, նոր կբաշըրսյեն քյեֆ-հալ խառցուցել:

Վարտան էլ ուր գյլխու գյայած բիթյուն մեկիկ-մեկի՜՜կ կասի; Թե ի՛նչխ ի վազիրի աղչիյն առե, թե ինչխ բայրաղ ի գյեռրծե, ինչխ տարե թակավրուն, թե ինչխ ուր մոտեն վեյ խատ էլ ուզեր ի:

Տառնա կասի. - Ահա՛ գյեռ էսա բեռխչեն էլ էն վեյ խաւրն ի, որ պիտի տանեմ թակավրուն:

Ինգյըրներայ մեկ կընսըղնի իտև, բեռղչեն կգյեռղնա, յալլա բաբամ՝ թակավրու սարեն: Կուրա թակավրուն, փարեն կառնի: Փարեն առնելույ վերճ՝ ճեռչ պաշտոն մ'էլ կառնի: Թուր կկախի, կէլնի տյուս:

Չում Վարդանն կայեղանա, կփիսնա, որ բեռնչա չըկա: «Է՜յ վախ» բոռալեն, գյլեոխ թըփելեն կվաձի չում թակավրու սարեն մեկ: Կէրթա կփիսնա որ, ուր ինգյեր պաշտոն առե, թուր կախե, էլե պիտի էրթա: Յախեն կպոնի, բայրըղներ կուզի: Կըռռա, կճվա, կասի. - Բայրըղներ իմ կնիկ գյեոռծե, էսա մարթ գյեողյե պերե ծախե թակավրուն:

Մարթ ինոր ծեն չլսի:

Վերճ կփանին դաւրվորին, էնտեղ Վարդան կասի. - Եթե ինոր կնիյն ի գյեոռծե, թող չում վաղն էսա գյախ խափմ' էլ պիրի, թե չկարըցավ պիրեր, ես կպիրեմ, էն գյախ ինոր գյուղութենի ջավեն թո քյաշի:

Դաւրվոր կասի. - Վարդանին փրե՛ք պըռնափուն:

Էն գյեող մարթուն էլ կասի. - Կընա՛, չում վաղն էսա գյախ մեյ խափ բայրաղ մ'էլ պիրես:

Էն գյեող մարթ կէլնի կէրթա քյաղքյի մեյ պառավըմ կկընողնի, կասի. - Ի սեր աստըծու, պառա՛վ, ֆիլան մարթու մոտ բայրաղըմ կա, ի՞նչխ պիրենքյ:

Պառավ կասի. - Իսուն ոսկի տու զիկ, ես կ'հաճողյուեմ:

Իսուն ոսկին կառնի, սանըղըմ կուտա շինել, ինոր իրիսի վերեն չամ կառնի, տայն էլ սև շոր, որ կէլնի այնայի պես:

Գյեող մարթ կտնի ինե, կուտա համլու քյամակ, կառնի կտանի Վարդանենց տուն:

Կկանչի Վարդանի մոր, կասի. - Խաթյուն, իմ իրիկ կընացեր էր Մըսըր, ինկե Յուրյուսաղեմ, զի կանչեր ի: Էսա իմ էլած-չէլածն ի, թո մնա ծեր տան, ես էրթամ Յուրյուսաղեմ, թե որ տառցա՝ զի, չտառցա՝ խալալ էլնի ծե:

Խարս կապյուլ չանե:

Պառավ կվերույի կասի. - Խա՛րս, կիսուր դա իքյան, տե՛ ի՛նչ իրավունք ունես զրյուցելու:

Մեյ խոսքով կհամոզի խարսին, կաճողի սընդյուկ տնել խարսի էօդեն:

Իրիկուն, խաբար կպիրեն վաձիրի աղչըկան, թե Վարդանի ծեռնից բայրըղներ տարեր են, Վարդանն էլ պռներ են:

Կնիյն ի, շատ կմտածի. կվերույի կասի. «Է՜յ, վաձիրի աղչիկ ի, էկա ի՞նչ հալի տիրացա, մըկա էլ ի՞նչ սև էկավ վեր գյլխուս»:

Կասի, կէլնի բայրաղ պատըխընից կառնի, մեյ խափ վեր ուր գյլխուն կպանա, կասի. - Էս էլ մե խեբիք ի:

Գյեող մարթ սընդըկի մեչեն թայմին կանի: Կփիսնա որ բայրաղ կտնեն ուրիշ պատխանըմ, ուրենքյ կքյնեն:

Կէլնի կիշեր բայրաղ կառնի, թռնի կէրթա: Կտանի դաւրվորին բայրաղ, ինքյն ուր կարդըրացույի:

Վարփանին իրեք փարի հյուքըմ կուփան, ուր սութ ասելուն խամար:

Աղչիկ որ առափուն կէլնի, կփիսնա՝ բայրաղ չըկա: «Է՜յ, վախ, - կասի, -էն էլ մեր ծեռնեն կընայ»: Կէլնի ուր կահվե աշկըրփին կճամխի, կասի. - Կընա խենքյ ինչ կանաս խասկընա:

Կէրթա կֆըռա փես-փեն, կուգյա կասի, թե Վարփանին իրեքյ փարի հյուքըմ փվին:

Աղչիյ որ կլսի, կասի. - Էլ ճար չըկա, ինոնքյ արին ուրենց շնութեն, ես էլ կանեմ իմ աղլարոգութեն, խենքյ ե՞ղ մածնից կէլնի, թե մածուն եղից:

Ուրենց աշկըրփին կասի թե. - Չում մըկա իմ աշկերփն իր, մըկա էլա՛ր զիկ ախպեր: Կընա՛ ֆիլան փողոն, մեյ խա փյուքյան կա, էն փյուքյան քըրեն շափ պանցըր էլնելուն խամար կոծ է մնայե, վարձի՛: Ինորից սորա կէրթաս խաներայ կթամխես, որ փըսվերկու խափ սընդյուկ շինեն:

Տղեն էլ կէրթա համ փյուքյան կվարծի, համ սընդկըներ շինել կուփա:

Աղչիյն էլ կէլնի դալալ կուփա կանչել, թե Ինգյըլիզի քյաղքյից մեյ խափ աղչիյ մ'իկե ֆիլան շուկեն, ակնունքյ, ջավահիր ի պիրե, կծախի: Վիր որ լազըմ ի, թո էրթա առնի:

Ինքյն էլ կէլնի, Ինգյըլիզ աղչըկան կըլըղին խալավ կուփա կփրել, կխայնի, այուսվի, կանթանաթվի, կէրթա կնսփի փյուքյան:

Վազիր-վյուքյելեքյ որ կլսեն, հերքյեզ կվազեն որ էրթան, ակնունքյ-ջավահիր առնեն:

Աղչիյն էլ ախպոր կճամխի, կոնյակ-շամփանյա, ուփելիքյ-խմելիքյ պիրել կուփա, կշարի վեր սեղնին:

Շեխ իսլամ փայթոնով կո⟨...⟩յս, կէճնի իսոր փյուքյան, որ ակնունքյ առնի:

Աղչիկ իփոր կասի, թե. - Ա՛լա գյեոմրյուգից ապրանքներ չեմ խանե փյուս:

Կբաշլայի Շեխ Իսլամին ըՆքյով-աչկով անել:

Շեխ Իսլամ կփիսնա, որ հաշիվ ուրիշ փեսակ ի, կասի. - Ե՞փ գյամ:

Կասի. - Իրիկուն սահա՛թ կիսուն արե՛:

Շեխ Իսլամ կէրթա, ուրիշ վազիրըմ կուգյա: Ինորն էլ պափասխան կուփա: Իսոր խեփն էլ աչքով-ընքյով կանի: Ինորն էլ սահաթ մեկին խոսքյ կուփա: Կուգյա ուր խեր, ինորն էլ 'սահաթ մեյ կիսուն խոսքյ կուփա: Չէրկընցյուցենքյ, փըսընմեկ վազիր գյալյուց վերճ կուգյա էն գյեող մարթ: Իփորն էլ սահաթ վեցին խոսք կուփա:

Ախպորն էլ կսովըրցուցի, թե էսա մարթեր կուգյան թե չէ, կփորմ կմնաս, կուգյաս կասես, թե. «Շոփ արա, զի կփոր մը խայց փուր, ուփեմ, էրթամ դա՛նգյերն աչկեմ»:

Իրիկուն սահաթ կիսուն Շեխ Իսլամ կուգյա: Կնստեն խետ մեյմըկու խեռշ-բեռշ, քաղյր վ'անուշ խաբար կուտան: Մեկեն ախպեր կուգյա վեր տռան կբոոա կճվա, կասի. - Էլի զի կտորըմ խայ տու ուտեմ, էրթամ դանգյերն աչկեմ:

Աղչիյն կասի. - Յամա՜ն, ի՞նչխ անեմ, ախպերս էկավ: Արե քյե մտուցեմ սընդյուկ, չում ախպերս էրթա, նոր էլի տյուս:

Ախպեր խայ կուտի, կէրթա թե չէ, էն մեկել վազիր կմտնի ներս: Իտոր խետն էլ խեռշ-բեռշ կէլնեն: Կնստեն քյաղյր վ'անուշ խաբար տալ թե չէ՝ ախպեր էլըմ կուգյա վեր տռան, էլըմ կբոոա կճվա, թե խայ տուր ուտեմ, էրթամ դանգյերն աչկեմ:

Աղչիկ էն վազիրն էլ կխճի մեչ սընդըկի:

Մեյ խոսքով տըսնըմեկին էլ կպիրի մտույի սընդյուկ:

Վերճ կուգյա գյեող պաշտոնյան:

Կթռնի աղչիկ ուրախ-ուրախ ինոր դիմաց: Կոլթուղ-կոլթուղի կէրթան կնստեն վեր սադրին: Կասեն, կզրյուցեն, կծըծղան, կուտեն, կխմեն, չում էն գյեող մարթուն կշարխոշցուցի:

Աղչիկ կէլնի տյուս, տղեն կսովըրցուցի, թե եփ էսա մարթ ուր պատմությունից կպոծնի, արե վեր տռան բոռըլոա:

Կուգյա կնստի էտա մարթու կուշտ, կասի. - Կշնորհավորեմ քյո նոր պաշտոն, լսածովս էտա պաշտոն նոր ես առե, պատմի խենքյ ի՞նչխ առեր ես:

Գյեող մարթ կքաշլայի Վարտանի կյանքյից պատմել չում վեց բայրըղներ տանել:

Էն ժամանակ աղչիյ կէրթա Շեխ Իսլամի սընդըկի վերեն, գյոմփով կզանի:

Գյեող մարթ տայցե, կասի էլըմ թե ինչխ կտանի կուտա թակավըրուն, ինչխ պաշտոն կառնի, ինչխ խետ Վարտանին կկռվեն, ինչխ Վարտանի տնից էն մեկ բայրաղ էլ կգյեողնա:

Եփ պատմութեն կպըռծընի, տղեն կուգյա, կբոոա, կճվա վեր տռան, թե՝ աստծու սիրուն, ես անութի եմ, զի խայ:

-Ամա՜ն, - կասի աղչիկ, - ախպերս էկավ, խո չենքյ էլնի՞ ջռազիլ: Արե քյե մտուցեմ էսա սընդյուկ, չում ախպերս ջահնըվի,. նոր կխանեմ տյուս:

Գյեող պաշտոնյան էլ կհամոզվի, կմտնի սընդյուկ:

Աղչիկ տյուռ կքյաշի վերա, կէրթա ուր տուն կքյնի, չում առավտուն:

Առավտուն, որ լյոս կպայցվի, կէլնի նամակըմ կգյրի թակավրուն, թե. «Կիշերս ինգյլիզի քյաղքյից թելկրաֆ եմ առե, թե խերս մեռեր ի, մերս էլ ծանտըք խիվանտ ի, կս պիտի էրթամ իմ երկիր: Քյեզնից կխնդրեմ որ, իմ ակնունքյ-ջավահիրներ առնես քյո տուն, չում ես գյամ»:

Թակավոր սիրով կընդունի: Լուր կէօրէոխկի աղչըկան, թէ առ սընդկըներն, արէ՛:

Աղչիկ ախպոր կէօրէոխկի, փըսվերկու խափ համալ կպիրի, մեյ-մըկին խիյ-խինգյ կուռուշ ավել կուտա, որ տանելու գյախ ծանդըր, ծանդըր տըքյան:

Համըլներ կառնեն սանտըխներներ, տըհտըքյալեն-տըհտըքյալեն տանեն թակավրու սանդըխ-օտասին:

Թակավոր մառախլի կէլնի, կուգյա, որ իսոր ակնունքյ-ջավահիրներ տիսնա:

Եփ թակավոր կուգյա սանդըխ-օտասին աղչըկան խեւո խաբար կուտա, աղչիկ կվերույի, կասի. - Էսա քյո ծեռայ տըկի մարթեր ի՞նչ նըմուշ դատ-դատաստան կտիսնա՞ն, մեղավորն կարդըրայուցեն, արտարն կմեղավորցուցեն:

Թակավոր կպարկանա վեր աղչըկան, կասի. - Սութ կասես, ե՞փ էլե էտա պան, որ ես չեմ իմցե:

Աղչիկ կասի. - Իմ խոսքին տըսնըմեկ խափ վըկա ունեմ, որ քյո դատաստան ըսկուն կեղտոտ կտիսնան:

Պալնիս կմտույի մեչ սընդկըներայ, սընդըկներ մեկիկ-մեկիկ կպանա:

Թակավոր ի՞նչ փիսնա. ակնունքյ-ջավահիրների տեղ մեյ սընդըկից Շեխ Իսլամ կուգյա տյուս, մեյ սընդըկից սադրազամ կուգյա տյուս, մեկելից վազիր, մեկելից սարասքյար, տըսնըմեկ խափ թամամ կանի:

- Իսոնք իմ վկաներ, թակավոր ապրած:

Կէրթա դեխ մեկել սընդըյուկ, գյեող պաշտոնյան էլ էն տեղից կխանի տյուս, կասի. - Թակավո՛ր ապրած, է՛ս էլ քյե գյեող: Թող Շեխ Իսլամ մեկիկ-մեկիկ պատմի, ինչ որ լըսավ էսա գյողու պենից:

Թակավոր զարմացած կխասնի Շեխ Իսլամի մուրուս կպռնի, կըպնի ակընջին կասի. - Տյու չամչըցա՞ր, կընայիր զամփարութեն:

Շեխ Իսլամ սընդըկի մեչ լսած խաբըրներ մեկիկ-մեկիկ կպատմի:

Թակավոր հրաման կանի, գյեող պաշտոնյային կտանեն կախեն, իսկ Վարտանին պըռնատնից կազատեն, կտանեն պաղնիս, կլողկըցուցեն, կպիրեն էն գյեող մարթու խալվըներ կխագյուցեն, իմոր պաշտոն կուտան իմոր, վերճեն վեց բայրըղի գինն էլ կուտա Վարտանին:

Խեր որ կիմնա ուր աղչիյն էլնել, կասի. - Արե, իմ տան մեչ կայ:

Աղչիկ կասի. - Չէ՛, չեմ իգյա:

Ուրիշ տեղըմ տունըմ կշինի, կնստի էնտեղ, կապրի ուր իրկան խետ:

Իննք կխասնեն ուրենց մուրազին, տյուքյ էլ՝ ծեր: